ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ — ՏԱՐԻ—ԹԻՒ—568—ՇԱԲԱԹ—29—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1862

Տարեկանգինն է 6 Արծաթ Մէճիտիէ։
Վեցամսեայ 3 1/4 „„
Մէկ ծանուցումը առդին 2 դուրուշ է
Ստորագրութիւնները կանխիկ են։
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1ին եւ 15ին կը սկսին։

ԱՐԱՐԱՏ

ԶՐԱԳԻՐ

Դուրս երթալիք լրագիրներուն համար ծախքը առնողին վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ համակ կամ որ եւ իցէ գրութիւն խմբագրին պիտի ուղղուի. եւ ասոնց համարուն ծախքը խրկողին վրայ է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՊՕՐՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐԸ

Մարսիլիա 4 յունվ.

Յորեն, կը բարձրանայ. լեհ 125, ֆր. 33 75։ — Ռումէլի 125։ — վառնա 31 ֆր. 126։ — Մեսաքս եւ խոզակ կը բռնուին։ — Սուսամ 62 25։

Փոխանակութիւնք 24 97 1/2։ — Ֆոնտոները կը բարձրանան 70 1/2։ — Քոնսոլիտէ 92 1/4։

Լոնտրա 5 յունվ.

Երկուշաբթի օրը յորենի նաւեր հասան։ Կիրք, Թայղան, կալաց ընտիր տեսակ 39 1/2։ Եգիպտացորեն Իպրայիլի 31 1/2—31։ — Գարի 23—23 1/2։

Քոնսոլիտէ 92 3/4։— Օսմանեան 38 1/2։— 38 3/4 եւ վարիչնալու հակամէտ։ Փոխառութիւն 70 3/4։ —Ները 67 75։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յունաստանի գահին յաջորդութեան խնդիրը քանի կերթայ կը դժուարնայ և Ս. գրոց մէջ պատմուած դժնիկին առակը միտքերնիս կը բերէ։

Յոյներն իրենց թագաւորը վռնտեցին օտարազգի ըլլալուն համար, և հիմա կաշխատին ու չեն կրնար ուրիշ օտարազգի մը գտնել՝ որ իրենց թագաւոր ըլլալու հաճի։ Եմեն առաջարկեալ ընտրելիները կը հրաժարին հելլենացիները կառավարելու պատիւն։ Որթուկալի թագաւորահայրը, Պելճիքայի թագաւորին երկրորդ որդին, Հ. վեռի թագաւորին եղբայրը, Սասսոի Սիքօլա իշխանը հետ պհեռե ընտրելի առաջարկուելով՝ բացէ՛ ի բաց մերժեցին այս պատիւը, և հիմա մեծ տերութիւնները կը վարանին յարմար ընտրելի մը գտնելու։ Իսկ յոյնք դեռ յոյս ունին և կը պնդեն որ Անգղեոյ Էլֆրէտ արքայորդին կրնան իրենց թագաւոր դնել։

Անցեալ շաբթու ծանուցեր էինք թէ Անգղեոյ կառավարութիւնը Սբ. Էնդրի Եկեղեցի անուն քաղաքագէտ պաշտօնատարը Յունաստան ղրկեր էր որպէս զի հասկըցնէ հելլենացւոց առժամանակեայ կառավարութեանը՝ թէ Անգղեա չպիտի կրնայ իրենց բաղձանքը կատարել Էլֆրէտ արքայորդիին նկատմամբ, և յորդորէ որ Որթուկալի Տօն Ֆերտինանտօ թագաւորահայրն իրենց թագաւոր ընտրեն։ Միանգամայն խմայլնէ որ Անգղեա միտք ունի Յոնիական կղզիներն Յունաստանի տալու՝ թէ որ հելլենացիք ահմանադրական միապետութիւնն հաստատ պահեն և հաստատեալ դաշնադրութիւններն յարգեն։

Այս շաբթու կը գրեն Աթէնքէն, թէ Սբ. Էլիսաբէթ հոն հասնելէն և իր պաշտօնին նպատակն առժամանակեայ կառավարութեան յայտնելէն ետև, Աթէնքի ժողովրդեան կողմէն պատգամաւորութիւն մը գացեր է իրեն աղաչելու որ Էլֆրէտ արքայորդիին համար Հելլենացւոց ունեցած բաղձանքին կատարմանը դէմ ելած խոչընդոտներն հարթելու ջանայ։

Սբ. Էլիսաբէթ պատասխան տուեր է թէ՝ հելլենացւոց բաղձանքին կատարումն առայժմ անհնարին է. և յորդորեր է որ իրենց ուշադրութիւնն ուրիշ կողմ դարձնեն։ «Դուք ազատ էք, ըսեր է, ձեր ուզած անձը ձեզի թագաւոր ընտրելու, բայց ես կը յորդորեմ ձեզ որ Որթուկալի թագաւորին հայրն ընտրէք»։ Այս ըսելէ ետև խնացուցեր է թէ Անգղիա հելլենացւոց վրայ ունեցած համակրութիւնը ցուցընելու համար յոնիական եօթն կղզիներն հելլենացւոց ազգին պիտի տայ՝ սա պայմանաւ որ ընտրուելիք թագաւորն Անգղեոյ ալ հաճելի մէկը ըլլայ։

Այսոր վրայ հետևեալ խօսակցութիւնը եղեր է պատգամաւորաց նախագահ Պ. Կուտասի և Սբ. Էլիսաբէթի մէջ։

Պ. Կուտաս։—«Յաւելով կը լսենք այդ լուրը։ Թէպէտ մեծ շնորհակալութեամբ կընդունինք եօթն կղզիներուն մէջ տուրիլը, այսու ամենայնիւ կը հաւատանք թէ, Յունաստան՝ դոնէ այս միջոցիս, առաւել պէտք ունի պատուաւոր և անկեղծ ահմանադրասէր թագաւորի մը՝ քան երկիրներու յաւելման։ Եմեն թագաւորական տոհմերէ աւելի Անգղեոյ թագաւորական տոհմը կը պատուէ ու կը յարգէ ահմանադրական վարչութիւնը։ Մնաց որ ձեր վեհութիւնը գիտէ թէ դիւրին բան չէ ողջոյն ազգի մը ուշադրութիւնը այնպիսի ընտրելիի մը վրայ դարձնել՝ որուն վրայ հորհած չէր մինչեւ հիմա, և շատ կը վախնամ՝ որ այս զլացումը ծանր խռովութիւններ պատճառէ ոչ միայն Յունաստանի՝ այլ և բոլոր Եւրոպի մէջ։

Սբ. Էլիսաբ.։—Երբոր մէկ մարդ մը վտանգը կը տեսնէ, և խոհականութիւն ունի, կրնայ առաջքն առնուլ։ Ուրեմն ձեր և ազգին խոհականութենէն կախեալ է բարեկարգութեան պահպանութիւնը։

Պ. Կուտաս։—Մինչև այսօր մենք և ազգերնիս բաւական խոհականութեան և խաղաղասիրութեան փորձեր տուինք Եւրոպայի։ բայց ներկայ պարագայներն և այս անակնկալ մերժումը մեծ երկիւղներ կը պատճառեն մեզ։»

Ազգային պահապան գօրաց պաշտօնակիցներն ալ պատգամաւորութեամբ Սբ. Էլիսաբէթին ներկայացան, և ասոնց դլուխ Հրօրնէոս գնդապետն հետևեալ խօսքերն ըսաւ։

«Ազգային պահապան գօրաց բոլոր պաշտօնականներուն հետ կուգամ մեր երանդագին բաղձանքն ու խնդրուածքը յայտնել՝ շնորհալի Վիքթորիա թագուհւոյն երկրորդ որդի Էլֆրէտ իշխանն Յունաստանի գահին վրայ տեսնելու համար։

«Այս փափաքը ոչ միայն մեր սրտերուն խորը քանդակուած է, այլ և պզգին խորին համոզմանը արդիւնքն է. որովհետև այնպիսի մեծ ազգի մը կը դիմէ, որ աղատութիւնը զօրութեան հետ միացուցած է իր վրայ, և ազգի մը մեծութեանը հարկաւոր եղած ամեն արժանիքներն ունի. այնպիսի ընտանիքի մը կը դիմէ որ իր ժողովրդոց աղատութիւնները կը յարգէ և ընտանեկան ամեն առաքինութիւններով բարեմասնեալ է։

«Գիտենք որ նախորոշում անուանով մարդկային պայմանագրութիւն մը կայ որ մեր բաղձանաց կատարմանը դէմ կը կենայ. բայց մեր խնդրուածքը ատուածային գործ մ'է, վասն զի «Զայն ժողովրդեան, ձայն Աստուծոյ»։ և ո՞ր մահկանացուն կրնայ այս աստուածային ձայնին հակառակելու պատասխանատուութիւնը վրան առնուլ։ Այս պատճառաւ մենք հաստատ պիտի կենանք մեր այս ուխտին վրայ մինչև որ լսելի ըլլայ։

«Պաղաչեմք ձեր վսեմութեան որ մեր այս ուխտն ու հաստատ որոշումը շնորհալի Վիքթորիա թագուհւոյն, Ալֆրէտ իշխանին և համայն Անգղեոյ ժողովրդեան հաղորդէք։»

Սբ. Էլիսաբ. հետևեալ պատասխանը տուաւ։

«Ձեմ կրնար, Պարոններ, ճշմարտութիւնը ծածկել։ Ինչպէս Յունաստանի ձայնը, անանկ ալ իմ ազգիս ձայնն անդառնալի է, վասն զի արդէն լըմընցած գործ մ'է այս։

«Անգղեա երբէք չպիտի վերջացընէ Յունաստանի նկատմամբ ունեցած ազնիւ զգացումները։ բայց չկրնար իրեն ընծայուած այս պատիւն ալ ընդունիլ։»

Աթէնքէն եկած վերջին լուրերը կը ծանուցանեն թէ ազգային երեսփոխանաց ժողովը որոշեր է որ հելլենական կառավարութեան ամեն հրամանագիրներն ու որոշումները «Էլֆրէտ թագաւորյուանաց» անունով գրուին ու հրատարակուին։ Քանի մը լրագիրներ կառաջարկեն որ Յունաստանի ժողովրդեան կողմէն պատգամաւորութիւն մը երթայ Լոնտրա և Վիքթորիա թագուհւոյն աղաչէ որ յունաց խնդրուածն ընդունի և իր Էլֆրէտ որդին թագաւոր տայ անոնց։

Եւրոպական լրագրաց խօսքին նայելով՝ Անգղեոյ կառավարութիւնը պաշտօնական կերպով իմացուցեր է Գաղղեոյ, Աւստրիոյ, Ռուսիոյ և Պրուսիոյ կառավարութեանց՝ թէ Յոնիական կղզիներուն պաշտպանութենէն հրաժարելու և այն կղզիներն Յունաստանի թողելու յօժարամտութիւն ունի։ և այս գործին կարգադրութիւնը համար՝ առաջարկեր է որ Յոնիական կղզեաց նկատմամբ 1815 ին Վիեննա եղած դաշնադրութիւնն ստորագրող ութ տերութիւնները դեսպանաժողով մը կազմեն Լոնտրայի մէջ, և յիշեալ դաշնադրութեան մէջ ըլլալիք փոփոխութիւնը վաւերացընեն։

Այս ութ տերութիւններն են Անգղիա, Գաղղիա, Ռուսիա, Աւստրիա, Պրուսիա, Սպանիա, Որթուկալ և Շուէտ։

Գաղղիական Ֆրանս լրագիրը կը ծանուցանէ թէ Անգղեոյ կառավարութիւնը Յունաստանի թագաւորութեան թեկնածուին կողմն ունեցած ահմանագլխին ճշդուիլը պիտի խնդրէ Օսմանեան կառավարութենէն։

Լոնտինացւոց յունուար 1ին օրը Նաբոլէոն կայսրը տերութեանց դեսպաններուն շնորհաւորութիւնը ընդունած ատեն բանախօսութիւն մը ըրաւ՝ որուն մէջ յոյս կը ցուցընէ թէ յառաջիկայ նոր տարւոյն մէջ Եւրոպայի խաղաղութիւնը անվրդով պիտի մնայ։

Փարիզի Մոնիթեօր Մորս պրքեպիսկոպոսը դեկտ. 15/27ին վախճանեցաւ։

Յայտնի է որ Նաբոնի մէջ օտարազգի մնալու արտօնութիւնը նոր տրուեցաւ եւրոպացւոց։ Այս արտօնութեան պատճառաւ տեղւոյն ազնուականները կառավարութեան դէմ գրգռուելով, երկրին մէջ խռովութիւն ելել է և քանի մը օտարազգիներ ալ սպաննուեր են։

Այս ոճիրներուն վրայ Նաբոնի անգղական դեսպանը բողոքած ատեն՝ կառավարութիւնը պատասխան տուեր է թէ ինքը հաճութիւն չունի այդ անկարգութեանց, այլ ազնուականներուն մէջ գտնուած ապստամբներն են չարեաց պատճառ. և ինքն ալ զանոնք պատժելու անկարող ըլլալը յայտնելով՝ Անգղեոյ կառավարութենէն օգնութիւն խնդրեր է զանոնք պատժելու։ Եւրոպական լրագրաց մէջ կը կարդանք նաև թէ Նաբոնի մէջ քոլէրա հիւանդութիւնը ճարակելով 250 000 հոգի մեռեր են։

Եգիպտոսի փոխարքայ Սաիտ փաշային և Իսմայէլ կառավարութեան մէջ գժտութիւն ծագելով, Իսմայէլ կառավարութիւնը թշնամական ձեռնարկութիւններու երթալ և Սուտանի սահմաններուն մօտ գունդ մը զրկելը էր։ Այսոր վրայ Եգիպտոսի կառավարութիւնն ալ Խարթումի գայմագամ Մուսա փաշային հրամանատարութեան ներքև գտնուած եգիպտական զօրաց թիւը հինգ հազարի լեցընելով՝ Սուտանի սահմանագլուխը պաշտպանելու զրկեր էր։ Վերջին լուրերը կը ծանուցանեն թէ Իսմայէլ փաշէի թագաւորը կարծելով որ եգիպտական զօրքերն իր վրայ կուգան, երկու տարի առաջ Եգիպտոսի փոխարքային կողմէն յանձնարարական գործով մը իրեն զրկուած և իբրեւ դերի վար գրուած Կապիթան Վահիպ էֆէնտին թող տուեր է, եւ միանգամայն հինգ հարիւր դերի, հարիւր կենդիանար փղոսկր (ֆիլտիշ) և 10 000 Ջայլեման (տէվէ գուշու) փետուր ընծայ զրկեր է Եգիպտոսի փոխարքայ Սաիտ փաշային։

Բեգրսպուրկի պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ Ռուսիոյ և Չինաստանի մէջ առևտրական նոր դաշնագրութիւն մը հաստատուեր է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Մուխթար էֆէնտին՝ արքունի դանձուն ծախուց վերատեսուչ (Մասրաֆ միւտիրի) անուանեցաւ երրորդ կարգի պաշտօնատարի տեղիմանաւ։

Իզմիրի ոստիկանութեան դլուխ Էմին պէյին Պարուշի պաշտութեան ասիճան տրուեցաւ։

Ջանդուցեալ Մըսրլեան Պետրոս

աղայի եղբայր մեծապատիւ Պօղոս էֆէնտին առաջին կարգի սեղանաւոր անուանեցաւ եղբօրը տեղ։

Դարձեալ կայսերական հրամանաւ՝ Ծովակալութեան ատենին նախագահ Ա. սեմ. Մուսթաֆա փաշան առժամանակեայ կերպով Ծովային գործոց պաշտօնեայ անուանեցաւ։

Ընքունի պալատան առաջին քարտուղարութեան պաշտօնը Արդարութեան բարձրագոյն ատենին առաջին քարտուղար Ա. սեմ. Մուսթաֆա էֆէնտին յանձնուեցաւ։

Դարձեալ կայսերական հրամանաւ՝ Արդարութեան բարձրագոյն ատենին նախագահ Բարձ. Ռեամիլ փաշան մեծ եպարքոս անուանեցաւ։

Ահաւասիկ անցեալ ուրբաթ օրը եղած պաշտօնական փոփոխութեանց առթիւ Բ. Դուռը կարգացուած կայսերական հրովարտակին թարգմանութիւնը։

« Իմ մեծաշուք Ա. էղլիս։

« Մեհէմմէտ Բիւշրի փաշան պաշտօնէն հանուելով, Տարի Շ. ուրայի նախագահ Հաճի Բաշիտ փաշան Սերասկերութեան կարևոր պաշտօնին դրուեցաւ Միւշիրութեան ատենին։

« Թօփհանէի ատենին նախագահ Հալիլ փաշան Թօփհանէի Միւշիր և թնդանօթաց վերատեսուչ անուանեցաւ։

« Ծովային գործոց վերատեսչութեան պաշտօնն ալ Ծովակալութեան ատենին նախագահ Մուսթաֆա փաշային յանձնուեցաւ առժամանակեայ կերպով։

« Այս երեք անձը Բ. Դուռը ղբկուեցան եւ կը հրամայենք որ ճանչուին։

« Մենակալն Աստուած հաւատարմութիւն և ուղղութիւն տայ իրենց պաշտօնին մէջ։ »

12 ըմբէպ

Ահաւասիկ Մեծ եպարքոսի փոփոխութեան առթիւ երեքշաբթի օրը Բ. Դուռը կարգացուած կայսերական հրովարտակին թարգմանութիւնն ալ։

« Իմ մեծաշուք Ա. էղլիս Նուսուֆ Ռեամիլ փաշա։

« Ցուստ փաշային հրաժարականը պատճառաւ, Մեծ եպարքոսի պաշտօնն ուրիշ արժանաւոր անձի մը տալ հարկ ըլլալով, ըստ որում դու, մեր կայսերական կառավարութեան պաշտօնեայներուն մէջ քու հանճարովդ ու արժանիքդ ծանուցեալ ես, պատշաճ դատեցինք այն պաշտօնը քեզի յանձնել։

« Ուստի Մեր միւս պաշտօնեայներուն հետ միաբանութեամբ պիտի ջանաս Մեր կառավարութեան գործերը դոհացուցիչ կերպով վարելու։

« Աստուած օրհնէ մեր ջանքը։ »

15 ըմբէպ

Թասվերի Էֆէնտիի տաճկերէն լրագիրը Ա. եէնիայէն դեկտ 21 թուով դրբուած հետևեալ հեռագրական լուրերը կը հրատարակէ Գարատաղի վրայ։

« Տերվիշ փաշան Գարատաղի մէջ ամրոցներ շինելու համար գունդ մը զօրքով Պարպինեէ և Պլաչա գացեր է։ Լեռնականները կը պատրաստուին այս շինութիւններն արգիլելու։ և Գարատաղի իշխանին քարտուղարն ալ Ա. եէնիա գրոնուող օտար տերութեանց դեսպաններուն բողոքը ածէ այս շինութեանց դէմ։ »

Օգոստափառ Ինքնակալին անձնական դանձուն վերատեսչութիւնը եղումներից պաշտօնեայ Ա. սեմ. Սէվքէս փաշային յանձնուեցաւ։

ԱԶԳԱՅԻՆ

Մինչդեռ կայսերական բարեխնամ կառավարութիւնն անդուլ հոգածութեամբ կ'աշխատի տերութեան ամէն գաւառներուն մէջ ժամանակիս քաղաքակրթեան և լուսաւորութեան ոգւոյն համեմատ կրօնական ազատութեան սկզբունքները տարածել, ամէն կերպ անիրաւութեանց և զրկանաց առաջքն առնուլ, և ամէն կարգի ժողովրդոց անդորրութիւնն ու բարեկեցութիւնն ապահովցնել, դժբաղդաբար, կայսերական կառավարութեան այս հայրախնամ հոգածութեանը հակառակ, տակաւին տեղ տեղ կրօնական մոլեռանդութեան հարստահարութեան և զրկանաց ցաւալի տեսարաններ կը նշմարուին։

Խարբերդէն կը գրեն թէ գաւառին Հիւսնիւ Մանսուր անուն դիւղաքաղաքէն հայ կին մը մահմետականութեան դառնալով, տեղւոյն տաճիկները յիշեալ կնոջ երեք անչափահաս որդիքը՝ որոնց մէկը ութ տարեկան մանչ տղայ մը, երկրորդը եօթը տարեկան աղջիկ մը և երրորդը կաթնկեր մանչ տղեկ մ'է եղեր, բռնաբար դրաւեր են։ և կաթնաբոյծ տղեկը որ մայրը չուզեր եղեր անուցանել՝ խեղդամահ ըրեր են։ իսկ աղջիկը տեղւոյն Գատը էֆէնտին և միւս ութ տարեկան տղան ալ Միւֆթի էֆէնտին առեր պահեր են և ուզեր են զանոնք ալ իրենց կրօնքին դարձուցնել։ բայց տղան յանձնառու չըլլալով՝ փախեր հայոց քով պահուըտեր է։ Սոր վայ Գատին և Միւֆթին զինուորներ հանելով՝ բոլոր հայոց տունները խուզարկութիւն ըրեր, տղան գտեր, և հայոցմէ շատ մարդիկ ալ բռներ բանտարկեր են, առանց ականջ կախելու տեղւոյն առաջնորդին և հայ երևելիներուն ըրած բողոքանացը։

Այս եղելութիւնը Խարբերդի կուսակալն իմանալով, կրօնափոխ կինն ու զաւկները Խարբերդ բերել տուեր է, և հոն իր ներկայութեանը գործը քննելով, իրենց կրօնական օրինաց վճռոյն յանձներ է։

Տեղւոյն Գատին և Միւֆթին ալ վճռեր են թէ տղան և աղջիկը չափահաս չըլլալնուն համարպէտք է որ մօրերնուն հաւատակից ըլլան։ Ուստի նորէն Հիւսնի Մանսուրի Գատին և Միւֆթիին յանձնուեր են։

Այս բռնական յափշտակութեան գործը ազգային վարչութեան ալ գրուած ըլլալով, տարակոյս չունինք որ պէտք եղած միջոցներն անյապաղ կը փութայ՝ ի գործ դնել, և Բ. Դրան բողոք մատուցանելով՝ յափշտակեալ անչափահաս որդւոյոց ազատութիւնը և անմեղ կաթնկեր տղեկը խղդողներուն պատժուիլը խնդրել կայսերական բարեխնամ կառավարութեան արդարասիրութենէն։

Նրբոր երբեմն երբեմն գաւառաց հոգևոր առաջնորդներէն ոմանց վրայ տեսնուած բասրելի անհոգութեան եւ ժողովրդոց նիւթական ու բարոյական զարգացմանը անփոյթ և մանաւանդ խոչընդոտ ըլլալնուն դեմ արդարասէս կը բողոքենք, չենք կրնար միւս կողմանէ լռութեան քողով ծածկել անձնուրաց և իրենց հոգեւոր խնամարկութեանը յանձնուած ժողովրդեան անդորրութեանն ու բարեկեցութեանը մոռդիր ու ջանադիր եղող առաջնորդներուդ ովելի վարմունքը, և չենք ուզեր անբասիր ընել ոչ մասնաւորով ընդհանուրը և ոչ ընդհանուրով մասնաւորը։ Կան առաջնորդներ որ վիճակի մը վրայ որ և իցէ հնարքով առաջնորդ կարգուելէն ետքը, վիճակին կամ գաւառագլխուն մէջ դանուած մէկ քանի չօրպաճիներու իբրև ամենախոնարհ ծառան հպատակը և գերին՝ իրենց ամէն գործողութիւններն անոնց քմացը կամացը և հաճոյիցը առանցքովը կը դարձուցնեն, աւելի իրենց շահուն ուշադիր՝ քան թէ ժողովրդեան անդորրութեանն ու բարեկեցութեանը։ Դպրոցաց խնամք տանիլ պէտք է, ժողովրդեան վիճակը անդորրելու փոյթ պէտք է, այն մէկ քանի չօրպաճիներուն կամ իշխան աղաներուն ձեռքովը աչքովը և ականոցովը կը նկատեն։

Ասոնք փորձերով և բազմաթիւ փորձերով ապացուցեալ են, և կրնանք խիստ մօտ տեղերէ անժխտելի օրինակներ մէջ բերել և ցաւալի ճշմարտութիւններ մերկ ցուցընել եթէ հարկ ըլլայ։ Իսկ ընդհանրապէս կրնանք ըսել թէ իբրև հայելի և օրինակ այլոց կան նաև այնպիսի ճշմարիտ ազգասէր և անձնուրաց առաջնորդներ, թէ և մեր դժբաղդութենէն սակաւաթիւ, որ իրենց ժողովրդեան վրայ հոգի կուտան, և ամէն նեղութիւն հալածանք և զրկանք նոյն իսկ ազգայիններու ձեռքէ ընդունելով ալ՝ իրենց կոչմանը համաձայն սրբազան պարտաւորութիւնին անթերի կատարելու առիթ մը չեն կորսնցուներ։

Այս վերջիններուն մէջ առաջիններէն է Արժ. Խրիմեան ազգասէր Մկրտիչ վարդապետ, Մուշի ընդարձակ գաւառին առաջնորդը, որուն ազգասիրութեան և ճշմարիտ անձնուիրութեան փորձերը քաջածանօթ են ազգայնոց։ Սակայն առաքինութիւնն ալ իր ատուերը ունի, և թշնամութիւնը առաքինութեան անբաժանելի ատուերն է։

Մուշի վիճակին և վանքերու բարեկարգութեան կարօտ ըլլալը՝ արևուլոյնոյ նման յայտնի է։ Խրիմեանի անձնուիրութիւնը ազգայնոց յոյսերուն պըսակ մը պիտի դնէր։ Այս պսակը փշալից ընելու կաշխատին Մուշի մէջ քանի մը վարձակալութեամբ (միւլթէզիմլիք) և աղքատ հայոց ճակտի քրտինքովը իրենց հացը շաղւոցներ, որոնք վիճակին ու վանքերը իրենց սեպհականութիւն դարձուցեր, և ամէն եկող առաջնորդները կա՛մ իրենց կամակից գործակից ըրեր, և կամ թէ ոչ՝ միջոց մը գտեր են հալածելու։ Այս միջոցը դիւրին է այնպիսեաց համար։ բնաւ բան մը որ չգտնեն՝ իրենց հին զէնքը կը գործածեն, և կառավարութեան հարկերուն հաւաքմանը արգելք կըլլայ ըսելով՝ առաջնորդ կը կործանեն։

Անհնարին ցաւ է մեզի և մեզի հետ անշուշտ բոլոր ողջամիտ ազգայնոց՝ տեսնել զԽրիմեանն այսպիսի որոգայթի մը մէջ։

Սակայն յառաջծանուցեր էինք թէ Արժ. Խրիմեան Մկրտիչ վարդապետը Մուշի գիւղաքնակ խղճալի ժողովրդոց վճարելիք արքունի տասանորդական տուրքերուն արդարապէս բաշխմանն ու կարգադրութեանը համար միջնորդեր էր տեղական իշխանութեան քով։ վասն զի աղքատիկ ժողովրդեան մը որ երբէք իր պարտականութեանց սահմանէն դուրս եղած չէ, անտանելի դժուարութիւն է, չըսենք անհնար, երկրին արդեանցը 10նէն մէկը տալու տեղ քանի մը պատիկը տալ և այն ալ արմոնեաց ամենէն սուղ ծախուած ժամանակին գնովը ստակ վճարելով և ոչ թէ երկրին բերքը տալով։

Այս գործին կարգադրութեանը համար Արժ. Խրիմեանն յատուկ աղերս մատուցեր է նաև Պարոնոյ կուսակալին։ Ազգային վարչութեան ալ արդէն գործն յայտնի ըլլալով, կը յուսանք թէ Մուշի գիւղացւոց այս թշուառ վիճակը կայսերական կառավարութեան դիտութեանը ներկայացնելու և արժանաւոր անօրէնութիւն մը հայցելու փութացած է։

Մեր տրտմութեան գլխաւոր պատճառը սա է, որ Մուշի մէջ քանի մը անունով հայեր՝ որոնք մինչև հիմա ժողովրդեան վնասովն իրենց քսակը պարարելու վարժուած են, և ապագայ բարեկարգութեանցերկիւղը ղերենք պատած, այնպիսի անձինք՝ որ վարձակալութիւն ըրեր և զրկանաց ճոխացեր են, Խրիմեանի ազգասիրական հոգածութիւնը վատաբար ամբաստանելու ժպրհեր են իբրև արքունի հարկերուն հաւաքմանը արգելք և խոչընդոտ, մինչդեռ իրաք՝ իրենց ապօրինաւոր շահասիրութեանը դէմ թռմբ մը եղած է։

Կը լսենք թէ Արժ. Մկրտիչ վարդապետն՝ այս դժուարութիւններուն ելք մը գտնելու և նիւթեալ որոգայթներն՝ ի դերև հանելու համար՝ անձամբ Կ. Պոլիս կը դիմէ, և քիչ օրէն հոս կ'սպասուի։

Շուշուէն հետևեալ բերկրաւիթ նամակը կը գրեն մեզ հրատարակելու խնդրանաք։

« Ազգասէր խմբագիր Մասիս պատուական լրագրոյ։

« Ձեր ազնիւ և ազգասէր բնաւորութենէն խրախուսեալ՝ կը փութամ հետևեալ տեղեկութիւնները հաղորդել ձեզ, ազգօգուտ լրագրոյդ հիւրասէր էջերուն մէջ տեղի շնորհելու խնդրանաք։

« Մինչդեռ երբեմն հայաբնակ քաղաքաց մէջ գիտութեան ճառագայթներ իր կը փայլէին, մինչև ցարդ Շուշուի Հայ հասարակութիւնը դեռ վիրենք պատող տգիտութեան խաւարին մէջ կը խարխափէին։ քանզի՝ չկար կարգաւորեալ դպրոցներ, անձնուէր և ուշիմ դասատուներ, որպէս զի մեր զաւակներն ալ ուսմանց և գիտութեանց մէջ կրթուելով՝ իրենց հայրենեաց պանծալի որդիք հանդիսանային։ Ուստի հեռաւոր քաղաքաց ուսումնական յառաջադիմութենէն դրդռեալ և բարի նախանձով մը վառեալ, ասկէց առաջ աղերսած էինք ազգային բարեխնամ վարչութեան մեր այս վիճակին դարման մը տանելու համար։ Ազգային վարչութիւնն ալ լսելով մեր ալաչանաց, և Խասգիւղի քարոզիչ Գերեր։ Ներսէս եպիսկոպոսն և Գասմանճեան մեծապատիւ Մկրտիչ աղայն՝ արդէն գիտնալով Շուշուցւոց այս դժբաղդ վիճակը, Ջանացին Բարունակեան խոհեմաբարոյ տէր Գրիգոր քահանայն հոս ղրկելու, որ 'ի սէր ազգին և 'ի սէր իւր ազգակցացը, թողլով իւր բնիկ բնակութիւնը, ասկէ երեք ամիս առաջ հոս ժամանեց, և որ այժմ կը պարապի դպրատանց և եկեղեցւոյ բարեկարգութեան պէտք եղած խնամքները տանիլ։ Վերջին օրերս այնքան կը ջանար աղջկանց վարժարանի մը համար ալ տեղւոյս բնակչաց սիրտերը պատրաստել, բաղդը մեր տէր հօրը օգնելով Մոլտո-Վալաքիոյ ազգայնոց այցելու Մարմեան արժանապատիւ Առաքել վարդապետը հոս ալ հանդիպելով, տէր հօրը ջանիցն աջակցեցաւ։ և տեսնելով Շուշուցւոց ուսման ունեցած փափաքը « Առաքելական » անուամբ ընկերութիւն մը կազմեց քաղաքիս ուսումնասէր բնակիչներէն բաղկացեալ, որուն առաջին ընկեր ինք գրուելով՝ հազար ղուրուշ ալ նպաստ շնորհեց։

Նաև տեղւոյս բոլոր ազգայնոց՝ վերարերեալ թէ եկեղեցւոյ, թէ դպրոցաց և թէ ուրիշ քաղաքական գործոց համար՝ սոյն առաքելական ընկերութեան մէջէն զատ զատ անդամներ ընտրուելով ազգասիրաբար անձանձիր ոգւով կ'աշխատին։ Յոյս ունիմ, մեծարգոյ տէր, որ ուրիշ անգամ ևս Շուշուցի բարեսէր ժողովրդեան վրայօք ուրախաւէտ լուրեր ձեր պատուական լրագրոյն միջոցաւ ազգայնոց հաղորդելու պատիւ կունենամ։

« Ընդունեցէք մեր խորին յարգանաց հաւաստիքը։ »

Շուշու Ռ. Գ. Թ.

10 դեկտ. 1862

Շուշուն բնակող մեր համազգեաց այս ուսումնասիրական ջանքը առաւել անոր համար գովելի է, որ ինքնայորդոր է, և այն՝ այնպիսի տեղ մը, ուր բուն հայերէն լեզուին հասարակ խօսակցութիւնն անգամ մոռցուած, միայն կրօնքին և անունին մնացեր էր հայութեան նշան։

Ուրաջայոյս ենք որ այսպիսի ինքնայորդոր ոգւով արթնցող ժողովուրդ մը՝ ոչ միայն քիչ միջոցի մէջ իր առաջադրեալ նպատակին կը հասնի, այլ և իրենց ազգասէր հովուին Խասգիւղի արժանապատիւ Տ. Գրիգոր քահանայ Բարունակեանի ուսումնասիրական ջանիքն ու անձնուիրութեամբն այս ուսումնասիրական եռանդը միշտ վառ մնալով, ոչ միայն իրենց տօնուր անցեալին վրայ ամչնալու տեղի չեն ունենար, այլ և բարի օրինակ մը կըլլան ուրիշներու, և մեզի ալ առիթ կուտան որ իրենց օր ըստ օրէ ունեցած յառաջադիմութիւնը հրատարակենք 'ի բերկրութիւն ազգայնոյ։

Մէծմուայը Հայատիս լրագրոյն անցեալ շաբաթ աւուր թուոյն մէջ կը կարդանք թէ « Մարսուանի մէջ Լոսկի-Ղամի թաղին բնակիչներէն մոմճի Գրիգոր անուն անձը նոյեմբեր 30ին մեռեր է Տ. Յով-

հանեցէք Եփրեմեան քահանայի ձեռօք ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ խոստովանելն և հաղորդուելն ետքը։ Այսու ամենայնիւ կերևի որ Արարատեան Հայ եկեղեցականք մեռնողին թաղումը զլանալնուն համար, քիչ մը վերջը տեղւոյն կաթոլիկներու առաջնորդ Եպիսկոպոսութեան Պօղոս վարդապետին տեղական իշխանութեան կողմէն երկու զապթիյէ գալով կ'առաջարկէ որ մեռեալը վերցնէ։ սակայն յիշեալ վարդապետն ալ դիւրաշցեր է թաղել վախճանեալը իր իշխանութեանը տակ չըլլալուն պատճառաւ։

Սակայն Հայ եկեղեցականները, անյուսալի բան, այն անձը վեց եօթն ամիս առաջ քանի մը անգամ կաթոլիկներուն դացած եկած է լսելով՝ մեռելը չեն վերցուներ և երեք օր անթաղ կը մնայ։ Ընտանեաց թախանձանացը ականջ կը դընեն, և ոչ ուրիշ ազդարարութիւններու։ այնպէս որ՝ տեղական կառավարութիւնը կը պարտաւորի ճամբորդ յոյն քահանայ մը գտնել ու թաղել տալ»։

Այս է Արէճմուային եկած ճշմարիտ լուրը, որ եթէ ստոյգ է, կը համաձայնինք իրեն հետ ըսելու թէ այսպիսի վարմունք մը, ինքզինքէ չգիտցող, ամենատգէտ մոլեռանդներու գործ է, ամեն լսողներու մեղադրանացն արժանի։

Միայն թէ մենք կը կասկածինք որ գահավէժ դատաստանով մը վճիռը փութացուցած կըլլանք, քանի որ վերոյիշեալ պատմութեան մէջ այնպիսի հակասական պարագայներ կը նշմարենք, որ գործը եթէ ոչ անհաւատալի՝ գէթ տարբեր հանգամանքներու տակ կը ցուցընեն։

Բանզի եթէ վախճանեալն սուրբ հայ քահանայի մը ձեռօք իր վերջին կրօնական պարտաւորութիւնները կատարեր է, ալ ի՞նչ հարկ կը մնայ անոր քանի մը ամիս առաջ կաթոլիկ, բողոքական, յունական, մովսիսական, մահմետական կամ պրահման ըլլալը բնուռելու։ մանաւանդ որ տեղւոյն հռովմէական առաջնորդն ալ անոր կաթոլիկ չըլլալուն վկայեր է։ Բողոքական ալ չեր կրնար եղած ըլլալ, քանզի բողոքական մը երբոր բողոքակրօն մեռնիլ ուզէ, խոստովանութիւն և հաղորդութիւն չընդունիր։

Ուրեմն ուրիշ ի՞նչ անմեկնելի կրօնական պատճառ կրնային ունենալ Արարատեան հայ եկեղեցականք՝ վախճանեալը երեք օր անթաղ թողու, և վերջապէս ալ չթաղելու ընտանեացն ու զաւակներուն և այլոց կողմանէ եղած թախանձանաց հակառակ, երբ շա՛տ անգամ տեսնուած է որ հայ եկեղեցականք՝ կրօնական վերջին պարտաւորութիւններին չկատարող համագգի և մինչև օտարազգի քրիստոնեաներն անգամ թաղելէ չեն խորշիր։

Ուստի այս խորհրդածութեամբ հաւանական կը թուի մեզ, որ այս գործն ուրիշ հանգամանքներ պէտք է ունեցած ըլլայ, զորոնք անշուշտ իմացած ատենիս մենք ալ կրնանք վստահութեամբ ուղիղ դատաստան մը ընել այս գործին վրայ։ և եթէ դժբաղդաբար վերոյիշեալ պատմութիւնն ստուգապէս ճշմարիտ ըլլայ, Արարատեան հայ եկեղեցականաց անարդարանալի վարմունքին դատապարտութիւնը կ'սպասենք Ազգային վարչութենէն, որ արդէն սկսած է զբաղիլ այս գործին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգային Վարչութիւնը՝ Արարատեանցի հաճի Գրիգորանուն անձին թաղման առթիւ պարտած տարաձայնութիւնները լսելով, արժան դատեց իսկոյն գրել Արարատ՝ այն անհաւատալի դէպքին վրայ մանր և ճշգրիտ տեղեկութիւններ ստանալու, և պարտ ու պատշաճ տնօրէնութիւնը ընելու այն անձանց նկատմամբ որ յիշեալ գործոյն գործադիրներն են եղած։ Բայց որովհետև Ազգային Վարչութիւնը երբէք հաւանութիւն չկրնար տալ այնպիսի մոլեռանդական ընթացքի՝ զորս կրօնից ազատութիւնը և դարուս ոգին կը դատապարտեն։

ԷՋԴ

Մեր մանրալրոց թերթին մէջ տարիէ մը 'ի վեր հրատարակուած Սիրվիս Բէլլիքօիբանատարկութեան վէպը դալ չաբթու աւարտելով, յառաջիկայնոր տարւոյն համար պիտի սկսինք մեծանուն Կոլտմիթ անգղիացւոյն յօրինած ՎԷՖԻԼՏԻ ԵՐԷՑԸ անուն շահաւէտ եւ հրահանգիչ վէպը որ մեծ յարգ ունի Եւրոպայի մէջ, եւ կը յուսանք թէ մեր ընթերցասէր ազգայինք ալ հաճութեամբ եւ ախորժելով պիտի կարդան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս որ երեքշաբթի օրուան Արարատոց մէջ ծանուցեր էինք, վաղը Յոյսպի Ս. Աստուածածին եկեղեցին եօթն ստորեկան անգղիացի տղայ մը պիտի մկրտուի։

Այս տղան ժամանակաւ Օէյմթին պուռնիի երկաթի գործարանը բանող մեքենագործ անգղիացիի մը զաւակն է։ Մայրը՝ որ նոյնպէս անգղիացի էր, այս տղան ծնանելէն քանի մը ամիս առաջը մեռնելով, երիկը իր քով ունեցած հայ սատարին ընտանեացը յանձներ է տղան, ուր խնամուեր մեծցեր և նոյն ընտանիքին հետ Եր. սաղեմ գացեր է, որուն նշանը ձեռքերուն վրայ կը տեսնուի։ Տղան հայոց վարժարան եւ իր հասակակիցներուն հետ ալ եկեղեցի երթալով՝ եկեղեցւոյ խորհուրդներն ալ ընդունելու կը փութայ։ բայց մկրտուած չըլլալուն համար զինքը խնամող հայ ընտանիքը խիղճ կընեն և դիր կը դրեն հօրը որ քանի մը տարիէ 'ի վեր իր հայ սատարին (խաչիցին) հետ Ռուսաստան կը գտնուի։ Անգղիացին ալ նամակաւ մը հրաման կը գրէ որ իր զաւակը մկրտեն ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ, և անունը Յօն (Յովհաննէս) դնեն։

Սոյն հայրական հրամանին համեմատ՝ միշեալ անկնունք տղուն մկրտութիւնն է որ վաղը պիտի կատարուի Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ՝ հանդիսաւոր աղօթքով։

—Իմաց կը տրուի հասարակութեան թէ կայսերական հրամանաւ տէրութեան հանքերուն վերատեսուչ Պ. սեմ. Տերվիշ փաշան յառաջիկայ երկուշաբթի օրէն ըսկըսեալ՝ ամեն երկուշաբթի և հինգշաբթի օրերը ժամը վեցին բնաղնութեան (ֆիզեք) և տարրաքննութեան դասախօսութիւն պիտի ընէ Տար իւլ Ֆունունի մէջ։ Ուստի դասերուն ներկայ գտնուելու փափաքողները պէտք է որ նոյն օրերը ժամը վեցէն քիչ մը առաջ Տար իւլ Ֆունունն երթան, և դասախօսութեան սրահը գումարուին։

—Պրիտէն հետևեալը կը գրեն մայրաքաղաքիս Բուռիէ տ'Օրիան լրագրին։

« Դեկտ. 24ին օրը արձակուրդ ուռած վաշտ մը զօրք Պօլիս դառնալու հրամարնաւը կը մանէին։ Երկու գնդապետ հելլենացիի մը խանութ կը մտնեն վաճառք գնելու համար, և չկրնալով գնոյն վրայ համաձայնիլ, յոյներն ու գնդապետները կըսկսին հայհոյել իրարու։ Զինուորները խանութէն դուրս կելնեն կերթան, և գործը գէշ հետևութիւն մը չպիտի ունենար՝ թէ որ Ալի Պայրաքտար անուն գնդապետ մը կռիւը չ'արձարձէր։ Այս մարդուն աղաղակներէն տեղւոյս տաճիկները գրգռուելով՝ հելլենացիին խանութը կոխեցին և խանութպանները ծեծել սկսան։

Անմիջապէս հելլենական հիւպատոսարանէն ատենադպիրը և Պրիտի կառավարչին դայմագամը վրայ հասան, բայց տեղական իշխանութեան ներկայութիւնն ալ բանի տեղ չդրուելով ծեծը կը շարունակուէր, և մինչև անգամ հիւպատոսարանին ատենադպիրն ալ անմասն չելաւ անկէց։ Զմոռնանք յիշելու որ դայմագամը գնդապետներով հասած էր հոն։

« Գաղղիոյ և Անգղիոյ հիւպատոսներն այս անկարգութիւնը իմանալնուն պէս դայմագամին դացին և ազդու կերպով բողոքեցին։ Ասոր վրայ դայմագամը պարտաւորեցաւ վերոյիշեալ երկու գնդապետներն և Ալի Պայրաքտարը բռնել բանտարկելու։

« Գործն առայժմ այնպէս մնաց մինչև որ կողմոյն կառավարիչ Իսմայիլ փաշան Բանտիայէն վերադառնայ։ »

— Այս շաբթու Բէրայի Անէնի շէհիր թաղը գինեսպան մը բռնուեցաւ՝ որ իր գինետունը գացող մարդիկը գինովցընելէ ետեւ կը կողոպտէ եղեր։

—Այս տարի Բեդրսպուրգի մէջ ձմեռը ուրիշ տարիներէ չափազանց ասստիկ ըլլալով, ջերմաչափը զրօյէն 20 աստիճան վար իջեր՝ և մինչև Բրօնշթատի նաւարանը ծովը սառելով, ամեն մարդ կառքերով ծովուն վրայ կը պտտին եղեր։

—Ռուսճուխէն կը գրեն թէ այս տարուան ձմեռն անցեալ տարուանէն աւելի սաստիկ է այն կողմերը։

—Յունաստանի առժամանակեայ կառավարութեան դրամական նեղութեանը նպաստելու համար, ինչպէս որ ամեն տեղ գտնուած յոյն հպատակները մէջերնին դրամաժողով կընեն, անանկ ալ Աղեքսանդրիա գտնուած յոյն վաճառականները 2853 լիրա հաւաքելով Աթէնք զրկեր են։

—Միջերկրական ծովուն մէջ այս օրերս բազմաթիւ յոյն ծովապատակներ երևան ելնելով՝ այլ և այլ ազգաց վաճառականի նաւերու նեղութիւն և վնաս կը պատճառեն։

Հերայէն կը գրեն թէ երկու հելլենացի վաճառականի նաւեր Հերա գալու ժամանակ Բիոս (Սաքիզ) կղզւոյն մօտ ծովապատակներէն կողոպտուեր են։ Զօչայի մօտ ալ երկու մանր նաւ (չքոնըլա) նոյնպէս կողոպտուեր են։ Այս ծովապատակները բնաջինջ ընելու համար երեք հատ Օսմանեան պատերազմական նաւ և 3—4 ալ օտար տէրութեանց նաւեր այն կողմերը զրկուեցան։

— Այս օրերս Գոնեայի մէջ երկու անգամ երկրաշարժ եղեր է անվնաս կերպով։ բայց Սպարթայի նահանգին Իվաճ անուն գիւղաքաղաքին մէջ ալ մէկմէկու ետևէ սասստիկագոյն երկրաշարժ ըլլալով, տեղւոյն բնակիչները տուներնին ձգեր և բաց տեղուանք կը բնակին եղեր։

Անցեալ չորեքշաբթի օրն ալ Իզմիր և շրջակայները բաւական սասստիկ շարժ եղեր է, բայց բարեբաղդաբար մնաս չէ եղած։

—Անողոքելի հարկը հնարից հայրն է։ Անգղիա՝ որ մինչև ցայսօր Մերիկայի բամպակը իրեն մշտահոս աղբիւր մը կը կարծէր, տեսնելով որ հիմակու հիմա այն տեղն գաշտերը մարդկային արեան ճապաղեքէ ուրիշ արդիւնք մը չեն ընծայեր, սարսափեցաւ իր միլիոնաւոր քաղաքացիները գտնէ ապագային մէջ յագեցընելու համար աշխարհիս ամեն կողմը դիմել։ Հինդուստանի, Աբոնի, Մերիկէի և Տաճկաստանի մէջ հետազօտող աչօք բամպակ կը բնուռէ, և եթէ այսօր չգտներ, վաղուանը կը մտածէ։ Իզմիրէն եկած նամակ մը կը ծանուցանէ թէ բամպակի մը շակութիւնը տարածելու համար Իզմիրի մէջ կազմուած յանձնաժողովն այս օրերս բամպակ մաքրելու համար Անգղիայէն յատկապէս մեքենայ մը բերել տուեր և երկաթուղին կայարանը դրեր է։ Ասկէց զատ մէկ ու կէս կենդինար ալ Մերիկայի ընտիր բամպակի հունտ բերել տալով ձրի երկրագործներուն կը բաժնէ։ Բամպակի մշակութեան զարգացմանը ջանադիր եղողներուն համար ալ բազմաթիւ շքապրանքներ կապատուին եղեր։

Դարձեալ՝ անգղիական լրագրի մը մէջ կը կարդանք, որ Անդրիանուպօլսոյ դաւառին մէջ ալ բամպակի մշակութիւնը ծաղկեցընելու համար Անգղեոյ Օսմանեան դեսպանը 10000 օխայ Մերիկայի ընտիր հունտ, և Մանչէսթէրի բամպակի ընկերութեան կողմէն ալ քսան հատ Ջին կոչուած գործիք, և զանոնք դարձուցանելու համար ճախարակ մը կը ղրկէ եղեր, և 20ի չափ մեքենայ ալ Գալեստին ղրկելու համար դներ է։

—Եւրոպայի մէջ տիրած բամպակի սովին լուրը Հինդուստանի բնակչաց ալ շահասիրութիւնը զրգռելով, մեծագումար բամպակ հասուցեր, և նաւահանգիստներն իջեցուցնելով՝ փոխադրութեան համար 10 000 տակառաչափ նաւեր խնդրեր են Անգղիայէն։

— Անցեալ տասնեւհինգ աւուր մէջ պատահած փոթորիկներուն ժամանակ Պերլէն Օսասա բանող Ռուսիոյ թագաւոր շոգենաւը Նէնի գալէն քիչ մը հեռացած ատեն, օդը չափազանց գէշնալով ծովեղերքի ջուրերը սառիլ կ'սկսին, և սառոյցներու մէջ կենալն անհնար ըլլալով՝ որչափ որ բացուելու կը ջանան, ալեկոծութեան սասստութենէն շոգենաւին մէջ սառոյցի կտորներ իյնալով, նաւաստիներուն ոսքն ու ձեռքերն սկսեր է պաղիլ, և գործ մը տեսնելու անկարող եղեր են։ Նաւապետը շոգենաւին մէջ ինկած սառոյցներն հալեցընելու համար տախտակամածին վրայ տաք ջուր լեցընելու հրաման ըրեր է, բայց օգուտ մը չէ եղեր։ և տեսնելով որ եթէ քիչ մ'ալ ծովեղերքէն հեռանալու ըլլայն՝ թէ ճամբորդները և թէ նաւաստիները պիտի սառէին, ծովեղերքին մօտ շոգենաւը խրել տալով մէջինները դուրս հանելէն ուրիշ ճարը չէ մնացեր։ Ռուսի նաւը դէպ 'ի ցամաք դարձնելով Թէոդոսիայէն 3-4 ժամ հեռու ծովեղերք մը կը խրէ և նաւաստիներէն 20 հոգի ցամաքը կը հանէ որպէս զի երթան Թէոդոսիայէն օգնութիւն խնդրեն։ Բայց խեղճերը օգին անհնարին ցրտութենէն մինչև Թէոդոսիա երթալու անկարող ըլլալով՝ ճամբան կը սառին։ Նաւապետը բաւական սպասելէն ետև լուր մը չառնելով, դարձեալ ճամբորդներէն 40 հոգի դուրս կը հանէ, անոնցմէ ալ մէկ քանին կը սառին, և մնացածները Թէոդոսիա հասնելով եղելութիւնը կիմացընեն, և թէպէտ բաւական օգնութիւն դալով մնացած ճամբորդները և նամակներն ու աւանդները կապատեն, սակայն շոգենաւին ազատուելուն կամ չազատուելուն վրայ դեռ լուր չկայ։

— Այս օրերս Փարիզի մէջ դերձակ մը մեռնելով 5 միլիոն 803,450 ֆրանք հարստութիւնը ելաւ։ Պատկին մէջ ըսած է թէ իր այս հարստութեան սկզբնաւորութիւնը 1812ին եղած է 6 ֆրանքով, որով բամկոնի մը կերպաս գներ, կարեր, և 13 1/2 ֆրանքի վաճառեր է։

Տարակոյս չկայ որ այս դերձակը եթէ մեր ազգին մէջ եղած ըլլար, ունեցած հարստութեանը համար մեծ ամիրայ մը պիտի համարուէր։ բայց Եւրոպայի մէջ ասկէց շատ աւելի հարուստ դերձակներ, սեղանաւորներ, հացագործներ, մսավաճառներ, կոշկակարներ և նպարավաճառներ կան, որ իրենց միլիոններովը չեն կըրնար խօսքի տեր ըլլալ՝ քանի որ հանճար, գիտութիւն և բարոյական վարկում չունեն։

—Անգղեոյ կառավարութեան հպատակ եղող երկիրներուն և կղզիներուն առևտրական և արհեստական վիճակին վերայ նոր հրատարակուած վիճակագրութեան նայելով, Անգղեոյ տէրութիւնը 3 միլիոն 319,649 քառակուսի մղոն (Անգղեոյ կղզւոյն տարածութեանը երեսնապատիկը) երկիր՝ և 144 միլիոն 499,761 բնակիչ ունի։

Այս երկիրներուն առևտրական գործերն ալ քսան տարուան մէջ վեցպատիկ աւելցած են։ որոնց մէկ տարեկան ել և մուտքը հետևեալն է։

	Մուտք։	Ելք։
Անգղեոյ։		
Հինդկաստան	40,622,103	38,888,210
Հիւս. Մերիկայ	11,985,155	10,933,722
Անգլ. կղզիք	5,339,528	5,696,485
Աւստրալիա	27,780,449	21,982,286
Սէյլան	3,551,239	2,558,586
Սէնթ-Մօրիս	1,769,209	2,259,650
Գլուխ Բարէյու։	2,665,902	2,080,398։

— Անգղիերէն նոր օրացոյցի մը գրածին նայելով՝ Լոնտրայի բնակչաց թիւը վերջին տասն տարուան մէջ 440,700 հոգի

աւելցեր , նոյն համեմատութեամբ տուներն ալ շատցեր են։ Տասը տարի յառաջ Լոնտրայի մէջ 305·073 տուն կար , հիմա 362·890ի հասեր է։

—Հնդկաստանի Լօտ նահանգին Լօ. քօնիա քաղաքին մէջ անցեալները դանձ մը գտնուելով՝ մէջէն երեք հատ մեծ ադամանդ ելեր է , որուն մէկին 100·000 եւ միւս երկուքին 30 000 անգղիական լիրա գին դրեր են։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՋՆՈՐԴ

ՔԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

Երգոյ Պ. Մատթէոս Մ. Էյվազեան ուսումնական երիտասարդը՝ Հայերէն լեզուին սկզբունքը դպրատանց տղոց շուտ, դիւրին , կատարեալ և հաստատուն կերպով սորվեցընելը կարելի ընելու համար նոր քերականութիւն մը խմբագրեր , և այս նոր առաջնորդը՝ որ լոկ գործնական վարժութիւն մ'է՝ արդէն հրատարակեր է։ Այս դասագրքին մէջ քանի մը դիտողութեան արժանի կէտեր կը նշմարենք , սակայն արդոյ հեղինակն հրատարակելիք ընդարձակին մէջ իր քերականութեան բաժանմանց և կարգադրութեանց օրինաւորութիւնը հարկը եւ պատճառները լեզուին ցուցընել ու բացատրել խոստացած ըլլալով , աւելի պատշաճ կը համարինք անոր հրատարակմանը սպասել։

Կը գտնուի մայրաքաղաքիս ամեն հայ գրավաճառներուն քով։ Գին 5 ղուրուշ։

ՀԵՒԷՐԲԷՕՈՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՈՅ

Ի ՊԷՏՍ

ՆՈՐԱՎԱՐԺ ՈՒՍԱՆՈՂԱՑ

Ազգային մանկուցոյն հայկական գեղեցիկ լեզուին ուսմանը մէջ օր ըստ օրէ յառաջադիմելուն նպաստելու փափաքով խմբագրուած է աշխատասիրութեամբ արդոյ Պ. Համբարձումեան Ս. Ալաճաճեան ուսումնական դասատուին։ Այս գրքոյկը ազգային դպրոցաց մէջ հայերէն գրաբառ լեզուն ուսանող նորավարժներուն կրնայ ծառայել իբրև Հայ լեզուին սեպհական եղող ասացուածները սովրեցընող առձեռն բառգիրք մը։

Մայրաքաղաքիս ամեն հայ դրավաճառներուն քով կը գտնուի։

ՀԱՄԱՌՕՏ

ԹՈՒՄԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍՏԵՓԱՆ Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

Երկրորդ տպագրութիւն

Հեղինակէն սրբագրուած ու զտնազան կանոններով եւ բազմաթիւ խնդիրներով ճոխացուցած

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏԻԿԹԱՇ

137 երես գին 3 ղուրուշ։

ՍԱՆԴՈՒԽՏ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Հեղինակութիւն Թովմաս Թէրզիեան

Ռերայի Երեւելեան Հայկական Թատրոնին դերասանական խումբէն անցեալ մարտ ամսոյ մէջ Նաւմի Թատրոնը ներկայացուած սրտաշարժ մէկ ողբերգութիւնն է այս՝ Սանտուլուկ Հայկազանց Թագաւորի դուստր՝ առաջին մարտիրոսուհի Սանդուխտ կոյսին քրիստոնէական կրօնի սիրոյն նահատակութեանը վրայ։ Ուսումնական հեղինակը Պ. Թովմաս Թէրզիեան՝ ջանք մը չէ խնայեր Հրիստոնէական կրօնը պատկառելի ցոյց տալու անոր մէջ։ և այս միակ նպատակին հասնելու համար գործածած հատընտիր ասացուածներն իր բանաստեղծական հանճարոյն կրնան անսուտ վկայ մը ըլլալ ամեն ընտիր ճաշակի և առողջ դատողութեան առջև։ Մանաւանդ որ ողբերգութեան նիւթն ըստ ինքեան որչափ գողտրիկ՝ այնչափ ալ սիրելի ըլլալով Հայոց՝ տարակոյս չունինք որ ամեն հայ յօժարամիտ պիտի գտնուի հատ մը ունենալ անկէց որուն գինն է 5 ղուրուշ և կը ծախուի Մեծ Նոր խանի վերի յարկը թիւ 7 դասարան սենեակը և Կ. Պոլիս ամեն հայ գրավաճառներու քով։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՅՑ

1863

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ռ. Հիւրքճեանի պատգրութեամբ՝ Ի լոյս ընծայուած հայերէն պատկերազարդ օրացոյցը՝ հատը 60 փարայի կը ծախուի Պոլսոյ ամեն հայ գրավաճառներուն խանութը։

ԳԱԶԱՄԻԱ

1863

ՍԷՆԷՅԻ ԻՍԱՎԻՅԷ

ՄԱԽՍՈՒՍ

Պ. Ռ. Հիւրքճեանի տպագրանէն այս տարի ևս հրատարակուեցաւ այս նախադուշակ օրացոյցը , որ ամեն հայ գրավաճառներու քով կը գտնուի։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Խարմադ գափուի կողմերը Սըղոր գասապին կից Զաթալ խանին վերի և վարի յարկը 11 ական սենեակի , և մէկ սափրիչի կրպակի տեղը , և Փաշա Գաբուսիի կողմերը Սօուք Չէշմէի մօտերը Սուլթան Ճամիի դիմաց 550 կանգուն դեռտինը որ կէս մասուրա Հրբրք էշմէի ջուր և ջրհոր մը ունի , աժան գնով ծախուին։ Այս տեղերը գնել ուզողները Գասպա Սաքաղ Թաղը նախորդ Խաչնէ Հէթխիւասի Մէհմէտ պէյին տունը պէտք է երթան ու խօսին։ 5

ՄՈՐԹԻ ՀԻԻԱՆԳՈՒԹԻՒՆՔ

Հնդկաստանի եւ Գաղղիոյ մէջ ամենէն երեւելի բժշկաց ըրած փորձերովն հաստատուած է որ Ժ. Էբէն բժշկին գտած Խոռօքոթիլ Ազիաթիքա բոյսին հատերն ուշիրօպը օգտակարագոյն դեղերն են ամեն տեսակ որքիւնէրու (թէմբէի) եւ ուրիշ մաքթի հիւանդութիւններու խոյլի (սըրաճա) եւ հնացեալ յողացաւերու։

Կը գտնուի Ղալաթիա Վոյվոտայի փողոցը թիւ 9 Բիւլիքաթէօռ Թէնէռալի տնօրէն Մ. Մէգիրէտիի գրատունը։

ԳԼԽՈՒ ՄԱԶԵՐԸ ՋՕՐԱՑՆՈՂ ՋՈՒՐ

Այս օգտակար ջուրը , որ թէ ճերմակ մազերը կը սևցընէ և թէ մազերուն արմատները զօրացընելով թափելուն առաջքը կառնէ , և թափած մազերուն տեղ նորէն աղեկը կը բուսցընէ , և բոլոր մազերն իրենց նախկին վիճակին մէջ կը փայլեցընէ։ Կը ծախուի Ղալաթիա Լոմէր փողոցը թիւ 17 Մերիկայի մազազան։ 2

Ան լրագիրը շաբաթն անգամ մը կելլէ շաբաթ օրերը։ Ով որ կուզէ կրնայ ստորագրիլ, Կ. Պոլիս Զինիլի խանը լրագրոյս գրասենեակը։ Իսկ դուրսերը հոգաբարձուներն են՝

ԻԶՄԻՐ. Յովհաննէս աղա Մազսուտեան.
ԵԳԻՊՏՈՍ. Շաւարշ աղա Այվիրեան.
ԱՆԴՐԻԱՆՈՊՕԼԻՍ. Մանտեսի Սուքիաս աղա Գալուստեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Պ. Խաչատուր Էրմասեան.
ԹՈՒԱՔ. Գէորգ եւ Յոհաննէս աղայք Աբգարեան.
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան.
ԱՏԱՆԱ. Նազարէթ աղա Շահպազեան.
ՊՐՈՒՍԱ. Կարապետ աղա Էսկիշեհիրլիեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Պ. Տ. Մուրատեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Պ. Դ Մայդաբացեան:
ՎԱՆ. Պ. Մկրտիչ Տ. Ատոմեան.
ԽԱՐԲԵՐԴ. Պ. Գէորգ Ճաճարեան.
ԵՐԶՆԿԱ. Ընթերցասիրաց Թանգարան:
ԱՏԱԲԱԶԱՐ. Մանտեսի Յակոբ աղա Ֆ. Գրիգորեան.

Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ուզողները՝ այս տեղերէն մէկուն հետ կրնան թղթակցիլ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԴՐԱՄՈՅ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ

Կ. ՊՕԼԻՍ 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ	Շաբ. 22	Բշ. 24	Գշ. 25	Դշ. 26	Եշ. 27	Ուր. 28
	Ղրշ.	Ղրշ.	Ղրշ.	Ղրշ.	Ղրշ.	Ղրշ.
Օսմանեան լիրա Մէճ.	101-30	101-30	101-30	101-30	101-30	101-30
Քսանոց արծաթ						
Թանվ. Մումթազէ	55	52-20	52	52-20	52-2	52-20
Էսհամը ճէտիտէ հին.	47	45-20	45	45-10	45-10	43-30
« « նոր	46-20	45-30	45	45-20	45-10	45
« « վերջին.	45	40	40-20	42-20	42-20	43-20
Սէրկի 10 տր. տկս. առ.	55-20	55-10	57	54	54-20	55
Անգղիական լիրա						
Բօլ իմբէռիալ						
Գարպովանց						
20 ֆրանքնոց ոսկի						
5 » արծաթ						
Սօֆօրին						
Աւստրիոյ դերբմից.						
ասնոց քան. հղրի.						

ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆՑ (ԴԱՄՊԻՕ) ԳԻՆԵՐԸ

ՕՍՄԱՆԵԱՆ ԼԻՐԱՆ 100 ՂՈՒՐՈՒՇ ՀԱՇՈՒԵԼՈՎ

Լօնտրա		Լիվրնօ	
Փարիզ	¢	Հէնօվա Լ. Ն.	
Մարսիլիա			ԻՍԿ ՄԷԹԱԼԼԻՔՈՒ ՀԵՏ
Վիէննա	«	Լօնտրա	
Թրիէստ	«	Մարսիլիա	

ԱՐՄՏԻՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ցորեն Թայղան	34—35	Ցորեն Իսմայիլ կակուղ	———
» Իսմայիլ	33—34	» Վարնա »	———
» Կալաց	———	» Պուրղազ »	———
» Բուռնիլի Պալէրք	———	» Պալէրք »	———
» Սամսօն	28—29	Եգիպտացորեն կալայի	———
» Աղօթ կակուղ	24—25	» Իպրայիլ	14—15
» Իպրայիլ »	———	Գարի	12—15

Վաճառականոցիս մէջ կայ ընդ ամենը 150000 գրիւ ցորեն ու գարի

ՄԵՏԱՔՍ

(ԻՓԷՔ)

Օսմ. լիր. 120 ղրշ.	
Տէմիրտէշ ընտիր տակ.	0000—0000
« 1 «	0000—0000
« 2 «	0000—0000
« 3 «	0000—0000
Սէլէ Պրուսա ընտիր տակ.	0000—0000
« « 1. «	0000—0000
« « 2. «	0000—0000
« « 3. «	000—0000
Մէչտուա 1. «	000— 000
2. «	000— 000
3. «	000— 000
Ֆիլաթիւռ 10—12 եւ 11—12	400— 410
Գօզա Պրուսա չոր	100— 110
Պարսկաստանի . . . Ֆրանք	32— 36

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Գխտոր (Մաղը) սեւ	100 լիրա	11
ճերմակ		7
Գեղին հատիկ (ՃԷՀրի) Էնկիւրի	100 լիրա	—15
Բուրդ Գըրբմ կէս լուաց.	հօխա	——
Չի լուացուած	100 լիրա	——
Տաճկաստանի	100 լիրա հօխ	—17
Բամպակ Գըրդ-Աղաճ եւ Գասապա	Հօխ. 100 լրշ.	—16
Ասոր. Կիպրոս. Ատանա	հօխա	—16
Թիֆթիք Էնկիւրի Զանկըրը	100 լիրա	—48
Ադիոն		240
Քիլիրէ բանուած	«	20—50
Ցերեւ	«	—55
Մեղրամոմ դեղին Տրապիզոն	100 լիրա	——
Անատօլու	«	——
Սուսամ Բուռնիլի	հօխայ	5—5
Կտաւատի հունտ (Քէթէն թոխ.) Բուռ. Քիլ.		—56
Անատօլու	»	—55
Ձէթ (Ձէյթին եաղը) Այվալըգ	Հօխայ	— 8
Իզմիր	»	— 7
Աճառ (Սապօն) Գանտիա	»	— 6
Միտիլլի	»	— 5
Բրինձ Եգիպտոս Բէշլիտ	»	— 2-20
Տիմեաթ	»	21/

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խանվէ Ռիսօ եւ Դաքիս	100 Հայ. լիրա	950—1100
« Մատթին եւ Սէյան	« «	—1200
Շաքար գլ. (քէլլէ) 6-10 Լ. կնդ.	100 լիրա	———
« փոչի (Թօզ)	« «	235—40
« Հոլ. գլուխ	« «	———
« փոչի	« «	——235
« Գաղղ. գլուխ	« «	——280
« փոչի	« «	——226
Անաղ (գալայ)	« «	——800
Պղպեղ (պիպէռ).	Հայ. 100 լիրա	——6½
Լեղակ (չիվիտ) Պէնկալա	« «	———
« Մատրաս	«	———
Որդան կարմիր (գըրմըզ)	«	—— 60
« « արծթագոյն	«	—— 58
« « տեսակ Բ.	«	—— 55
« « խոնաւ	«	—— 50
Անուշատոր (Նըշատըր)	Հայ. 100 լիրա	——7
Պողպատ (Զէլիք) թիւ 0 եւ 00		——150
Կապար (Գուրշուն)	«	3—110
Թիթեղ (Թէնէքէ) ղոյդ մնտուկ	«	——300
Զինք տախտակ թիւ 7—12	Հայ.	—— 4/1
Երկաթ Անդ. ձողաձեւ (չուպուդ)	Կնդ.	54— 55
« Բեւեռցու	«	59— 60
« Տախտակ	«	90— 95
« Բոլորակ	«	———
« Ռուսիոյ	«	———
Քարֆիձա	Հայ.	21/2—3-20
Ծծումբ (քիւքիւրտ) Իտալիա	Կնդ.	———
Իսթիւպէճ՝ ճէն. ղոյդ Սնտ.	«	——235
« Պէլճ. «	«	——110
« Թրիէսթ «	«	——121
Ռում Անգղիոյ	Կալ	—— 12
« Ամերիկա	«	—— 10
Սաառմաչէթ Վիէննա	«	—— 19
« Թրիէստ եւ Գաղղ.	«	—— 17

Խմբագիր-Տնօրէն

Կ. Ս. ԻԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Պ. ՊՕԼԻՍ ՁԻՆԻԼԻ ԽԱՆ